ISSN 1829-2925

Շողիկ

Shoghik
2024/1



AMAA
ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնադիր՝
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Խմբագրական խորհուրդ՝
Պատասխանատու խմբագիր՝ վեր. Ավետիք Խաչատրյան
Գեղ. խմբագիր՝ Հասմիկ Հարությունյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Լյուսյա Առաքելյան
Էջերի ձևավորումը՝ Արման Սարգսյանի

Editorial Board:
Chief Editor: Rev. Avetik Khachatryan
Content Manager: Hasmik Harutyunyan
Copy Editor: Lyusya Arakelyan
Design and Illustration: Arman Sargsyan

Գրանցման վկայական՝
01Ս 000035
Հրատարակչության 23-րդ տարի

«Շողիկից» մեջբերումներ անելու դեպքում հղումը պարտադիր է:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն (AMAA) © ՀԱԵ / ECA

ՀՀ, 0019, Երևան, Բաղրամյան 18
(+374 10) 54 35 52; 54 35 76
www.shoghik.am
ce@eca.am

Տպագրվել է «Մագաղաթ» տպարանում:
Տպաքանակը՝ 8.000:
Տարածվում է անվճար:

Սուրբ Ծնունդ, Ավետարան, 13-րդ դ., խաղավանք, ծաղկող՝ Գրիգոր Արցախեցի

ՈՒՄ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅԱՆՆ ԵՍ ՀՐԱՎԻՐՎԱԾ

Երբևէ մասնակցե՞լ ես ծննդյան տարեդարձի՝ առանց հոբելյարի: Մի՞թե տարօրինակ չէր լինի, երբ հրավիրված լինեինք խնջույքի և շնորհավորեինք ու նվերներ տայինք միմյանց, բայց ոչ նրան, ում ծննդյան տարեդարձն է:
Կզարմանա՞ս, եթե ասեմ, որ այս օրերին բազմաթիվ մարդիկ մեծ տոնախմբությամբ և շքեղությամբ նշում են ծննդյան մի տարեդարձ, որտեղ հրավիրված չէ իրական հոբելյարը:

Ի ուրախություն ինձ և քեզ՝ մենք գիտակցում ու հասկանում ենք, թե ում ծնունդն ենք նշում և ինչ տվեց մեզ այդ ծնունդը՝ Սուրբ Ծնունդը: Որովհետև դա Աստծո միածին որդու՝ Հիսուս Քրիստոսի՝ աշխարհ գալու տոնն է, Որի Ծնունդով և Հարությամբ պիտի լուծվեր ողջ մարդկության փրկության հարցը: Անշուշտ սա յուրաքանչյուր քրիստոնյայի համար ցնծության և ուրախության առիթ պետք է լինի, ուստի միմյանց հետ նվերներով փոխանակվելուց առաջ նախ մեր նվերներն իրական հոբելյարին շնորհենք:

Բայց ի՞նչ կարող ենք նվիրել Մեկին, ով աշխարհն արարող Աստծո որդին է և արդեն իսկ ամեն ինչ ունի: Այո՛, ճի՛շտ ես՝ Նրան նյութական ոչինչ պետք չէ: Սուրբ Գիրքը ևս հավաստում է դա. «Այն Աստվածը, որ ստեղծել է այս աշխարհը և դրա մեջ առկա ամեն բան, նա է երկնքի և երկրի Տերը: Նա ձեռակերտ տաճարներում չի բնակվում, ոչ էլ մարդկանց ձեռքով է պաշտվում, իբրև թե մի բանի կարոտ է: Նա է ամեն բանի կյանք ու շունչ և ամեն ինչ տալիս» (Գործք Առաքելոց 17:24-25): Թերևս միայն մեր սիրտը որպես նվեր տալը բավական է՝ Հիսուսին ուրախություն պատճառելու համար:

Այսուհետ երբ պատրաստվես Սուրբ Ծննդյան և Ամանորյա տոներին, հիշի՛ր.
Սուրբ Ծնունդը միայն նվերներ տալն ու ընդունելը չէ, այլ, նախևառաջ, Քրիստոսին նվիրվելն ու Քրիստոսին իբրև նվեր ընդունելը:
Սուրբ Ծնունդը միայն մարդկանց հրավիրելը կամ հրավերք ընդունելը չէ, այլև Հիսուսին մեր սրտի տուն հրավիրելը:

Սուրբ Ծնունդը միայն տան, մարմնի և նյութականի պատրաստությունը չէ, այլև սրտի, հոգու և մտքի պատրաստությունը:
Որովհետև միայն պատրաստված սրտով, հոգով ու մտքով կարող ենք ընդունել, դավանել ու հռչակել մանուկ Հիսուսին:

Սուրբ Ծնունդը միայն տարեթիվ չէ, այլև կյանք, և այդ կյանքի աղբյուր մանուկ Հիսուսը պետք է թագավորի մեր կյանքում:

Հասմիկ Հարությունյան

Ուրախություն, որ կնոջության պատճառ պիտի դառնա

Բեթլեհեմ քաղաքի շրջակա արոտավայրերում հովիվները հոտեր էին արածեցնում: Նրանք գիշերները պահպանում էին հոտերը: Մի օր Աստծո հրեշտակն երևաց հովիվներին, և նրա փառքը երկնակամարում պայծառ լույսի նման շողաց: Հովիվներն այս տեսնելով շատ վախեցան:

Հրեշտակն ասաց. «Մի՛ վախեցեք, որովհետև ձեզ ավետում եմ մեծ ուրախություն, որ բոլոր ժողովուրդների ցնծության պատճառ պիտի դառնա: Այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի փրկիչ, որ Աստծո օծյալն է: Սա ձեզ համար ապացույց կլինի: Մի երեխա կգտնեք խանձարուրով պատված և մսուրի մեջ դրված»:

Այդ հրեշտակին միացավ հրեշտակների բազմությունը, որն Աստծուն էր փառաբանում՝ գոչելով.

«Երկնակամարի վրա Աստծո փառքը թող հայտնվի,
Խաղաղություն թող լինի երկրի վրա.
Եվ մարդկանց մեջ սեր ու հաշտություն լինի»:

Հրեշտակները հանկարծ հեռացան նրանց տեսադաշտից: Աստված առաջինը հովիվներին հայտնեց մարդկության փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին:

Նրանք միմյանց ասացին. «Եկեք Բեթլեհեմ գնանք և տեսնենք, թե Տիրոջ հայտնածն ինչ է: Նրանք շտապեցին Բեթլեհեմ: Այնտեղ գտան Մարիամին, Հովսեփին և մսուրի մեջ դրված մանկանը: Տեսնելով նրանց, հովիվները Մարիամին և Հովսեփին հայտնեցին մանկան մասին հրեշտակի ասածը:

Բոլոր նրանք, ովքեր լսեցին հովիվների պատմածը, զարմացան: Մարիամն այս ամենը միտքն էր պահում և մտածում էր դրանց մասին:

Հովիվները արոտավայրերը վերադարձան՝ փառաբանելով և օրհնելով Աստծուն իրենց տեսածի և լսածի համար, որ ճիշտ հրեշտակի ասածի նման էր:

Ավետարան ըստ Ղուկասի

Դասավորի՛ր նախադասությունները՝ համարակալելով ճիշտ հերթականությամբ.

Տիրոջ հրեշտակը երևաց հովիվներին,
Տիրոջ փառքը լույսի պես ծագեց նրանց վրա,
նրանք սաստիկ վախեցան:

Այսօր Դավթի քաղաքում ձեզ համար Փրկիչ ծնվեց, որ Օծյալ Տերն է:

1 Դաշտերում հովիվներ կային,
որոնք գիշերով իրենց հոտերին պահակություն էին անում:

Սա ձեզ համար նշան կլինի.
մի երեխա կգտնեք խանձարուրով փաթաթված ու մսուրի մեջ դրված:

Եվ հրեշտակը նրանց ասաց.
«Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում,
որ ամբողջ ժողովրդինն է լինելու:

Ինքդ քեզ կարող ես ստուգել՝ բացելով Ղուկաս 2.8-12:

Ծննդավայրը՝ ԲԵԹԼԵՀԵՄ

Մարդկությունը տարբեր ծնունդներ է նշում, բայց կա մի յուրահատուկ ծննդյան տոն,որ մարդկության զգալի մասն է տոնում, որովհետև Բարձրյալ Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի ծնունդն է, ինչի մասին մարգարեացել էր Եսայի մարգարեն. «Դրա համար Տերն ինքը ձեզ նշան կտա: Ահա կույսը կհղիանա ու մի որդի կծնի և նրա անունն Էմմանուել կդնի» (Եսայի 7.14):

Բեթլեհեմ թարգմանաբար նշանակում է Հացի տուն, այլ կերպ՝ Հացատուն: Անունն էլ կարծես մարգարեության մաս լինի, քանի որ երկնքից այստեղ իջավ և ծնվեց մեր հոգիներին կենդանություն տվող ՀԱՑԸ, ինչպես որ Ինքը՝ Տերն է ասում. «Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջել: Եթե մեկն այս հացից ուտի, հավիտյան կապրի, և այն հացը, որ ես կտամ, իմ մարմինն է, որ ես տալու եմ աշխարհի կյանքի համար» (Հովհաննես 6.51):

Բեթլեհեմը Հին Կտակարանում

Բեթլեհեմում է ծնվել Դավիթը, ով հետագայում Սամուել մարգարեի կողմից նույն քաղաքում օծվեց որպես Իսրայելի թագավոր (Ա Թագավորաց 17): Բեթլեհեմն անվանում են նաև Դավթի քաղաք: Հռութի գրքի համաձայն՝ այստեղ են ապրել մեզ քաջ ծանոթ Հռութն ու Բոոսը: Գիտենք նաև, որ Բեթլեհեմում է թաղվել Հովսեփի մայրը՝ Ռաքելը (Ծննդոց 35.19): Միքիա մարգարեն կանխագուշակում է, որ Բեթլեհեմում է ծնվելու Քրիստոսը (Միքիա 5.2):

Բեթլեհեմը Նոր Կտակարանում

Նոր Կտակարանի ժամանակներում Բեթլեհեմ քաղաքը պատկանում էր Հրեաստանի շրջանին, այդ իսկ պատճառով ավետարանիչները նշում են, որ Քրիստոսը ծնվել է Հրեաստանի Բեթլեհեմ քաղաքում: Հովսեփը և Մարիամը ծնունդով Բեթլեհեմից էին, բայց ապրում էին Նազարեթում: Այդ օրերին Օգոստոս կայսրը մի հրամանագիր է հրապարակում՝ իր կայսրության սահմաններում գտնվող բնակիչների մարդահամար անցկացնելու վերաբերյալ: Ամեն մարդ պարտավորվում է իր հայրենի քաղաքը գնալ՝ արձանագրել տալու իր անունը: Հովսեփը ևս Մարիամի հետ Գալիլեայի Նազարեթ քաղաքից գնում է Բեթլեհեմ, որտեղ և ծնվում է Հիսուսը: Հովիվները, հետագայում նաև մոգերը, գալիս են Բեթլեհեմ՝ երկրպագելու Քրիստոսին (Ղուկաս 2):

Բեթլեհեմը ներկայում

Այսօր Բեթլեհեմը գտնվում է Պաղեստինի ենթակայության տակ և համարվում է քրիստոնյաների համար հատուկ կարևորություն ունեցող վայր՝ Երուսաղեմից հետո: Քաղաքը մինչ օրս այցելում են բազմաթիվ զբոսաշրջիկներ և ուխտավորներ, որպեսզի սեփական աչքերով տեսնեն այն վայրը, որտեղ, ըստ ավանդության, ծնվել է Քրիստոսը, տեսնեն սուրբ Ծննդյան քարանձավը, որտեղ հենց դրված է մսուրը: Այստեղ է գտնվում Սուրբ Ծննդյան եկեղեցին, որը կառուցվել է 326 թվականին:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մանրանկարչությունը, որպես կերպարվեստի բնագավառ, հայտնի է եղել հնագույն ժամանակներից, սակայն վերելք է ապրել Քրիստոնեության տարածումից հետո:
Մանրանկարչության հիմնական բնագավառներից մեկը գրքի ծաղկումն է, գրքարվեստը:

Թերթերը տողելու, ուղիղ գծեր և խորաններ, շրջաններ, կամարներ ու լուսապսակներ գծելու համար գործածում էին քանոն ու կարկին, որոնցով զգուշորեն թեթև հետք էին թողնում մագաղաթի կամ թղթի վրա: Դրանից հետո նկարիչը կարմիր ներկով (որդան կարմիր), ինչպես նաև մորենով կամ օքրայով ձեռքով գծում էր զարդանկարի հիմնական ուրվագիծը, ինչպես նաև նկարի այն մասը, որը ծածկվելու էր ոսկով: Ի դեպ այդ մասերին քսում էին որևէ սոսնձող նյութ (սխտորի և այլ բույսերի հյութ, ձվի սպիտակուց), ապա ծածկում բարձր տեսակի ոսկու բարակ թերթերով: Այնուհետև արդեն նկարը ծածկվում էր բնական ներկերով:

Հայկական մանրանկարչությունն առանձնանում է ոճերի և դպրոցների բազմազանությամբ: Ամենից շատ պատկերազարդվել են Ավետարանները, ապա Աստվածաշունչը և ծիսական-կրոնական մյուս ժողովածու-մատյանները: Մեզ հասած առաջին մանրանկարները 6-7-րդ դարերի նմուշներ են: «Մլքե թագուհու Ավետարանը», «Կարսի Ավետարանը», «Տրապիզոնի Ավետարանը» մեզ են հասել Բագրատունիների և Արծրունիների թագավորությունների շրջանից:

Թեև մանրանկարչությունն անբաժան է ձեռագիր գրքից, սակայն ժամանակի ընթացքում այն ինքնուրույն զարգացում է ապրել և իր հարստության, ոճական բազմազանության, գունային առանձնահատկությունների շնորհիվ դարձել է ազգային արվեստի մի ինքնատիպ ճյուղ:
Կրոնական թեմաներով աշխատանքների մեջ առանձնակի դեր ու նշանակություն ունեն գույները: Գույների խորհուրդն իմանալով և դրանց ուշադրություն դարձնելով՝ կարող ենք հասկանալ, թե ովքեր են պատկերված և ինչ բովանդակություն ու գաղափար է արտացոլված աշխատանքում:

1286թ., Ճաշոց, Կիլիկիա

Կարմիրը զոհաբերության և հարության գույնն է: Ներկայացնում է աստվածային ուժն ու զորությունը: Ունի մաքրագործող և մեղքերին հարություն տվող նշանակություն:

Կապույտը երկնային խաղաղության գույնն է, ցույց է տալիս աստվածային անհասանելիությունը, հավերժությունը, կատարյալն ու երկնայինը: Կարմիրի կողքին կապույտն ամենից շատ գործածվող գույնն է: Հիսուս Քրիստոսի հագուստը կարմիր-կապույտ գույներով է պատկերվում, քանի որ Նրա մեջ միավորվում են մարդկայինն ու աստվածայինը:

Կանաչը ներկայացնում է կյանքն ու հույսը, խորհրդանշում է բնության և կյանքի զարթոնքը, Աստծուց մեզ տրված հավերժական կյանքը: Կանաչի երանգներով հաճախ պատկերվում են զգեստները: Մկրտության տեսարանը պատկերող մանրանկարներից մեկում, օրինակ, Հովհաննես Մկրտչի զգեստը մուգ կանաչ է:

Ծիրանին արքայական գույն է: Հաճախ գործածվում է Քրիստոսի և Մարիամ Աստվածածնի հանդերձները գունավորելիս: Միջնադարի մեկնիչները ծիրանի ասելով նկատի են ունեցել այն թանձր կարմիրը, որն ավելի շատ մոտ է կապույտին, քան նարնջագույնին:
Այն ստացվում է որոշ խխունջներից և ունի կապտավուն (մավի), արնագույն (կարմիր), կանաչավուն, դեղնակարմրավուն երանգներ:

Ճերմակը համարվում է Քրիստոսի գույնը, որովհետև Քրիստոսը մարդկությանը լուսավորեց մեղքի խավարից: Սպիտակով են պատկերվում հարուցյալ Քրիստոսի զգեստները և հրեշտակները:

Ոսկեգույնը խորհրդանշում է Աստծո արքայությունը: Դեղինն աստվածային լույսի, իմաստության, ճշմարտության և փառքի գույնն է, սակայն երբ աղոտ ու անփայլ է, արտահայտում է դավաճանություն, եսասիրություն, ագահություն: Սա մասնավորապես Հուդա Իսկարիովտացու գույնն է:

Սևը մահվան, տգիտության, խավարի իշխանի գույնն է: Այն հիշեցնում է չարի և դժոխքի հետ առնչվող ամեն ինչ:

1292թ., Ավետարան, Նորավանք Սյունիք, Գրիչ և ծաղկող՝ Մոմիկ:

ԱՋԳԱՀԱՄԱՐԸ ԲԵԹԼԵՀԵՄՈՒՄ

Աստվածաշնչում նկարագրված Հիսուսի ծնունդը տեղի է ունեցել Բեթլեհեմում: Հիսուսը ծնվել է այն ժամանակ, երբ Հռոմի Օգոստոս կայսրը կարգադրել էր բնակչության մարդահամար անցկացնել իրեն ենթակա բոլոր երկրներում: Դրա համար բոլորը պետք է գնային իրենց հայրենի քաղաքները: Այդ պատճառով Մարիամը Հովսեփի հետ ուղևորվեց Բեթլեհեմ քաղաք, որտեղ ծնվել էր Դավիթ թագավորը:

Բեթղեհեմը մարդաշատ էր: Գտի՛ր ընտանեկան զույգը, որն ապաստան է փնտրում:

Տների տանիքներն օգտագործում էին այցելուներին ապաստան տալու համար: Գտի՛ր 3 ծածկ:

Գտի՛ր եզանը գոմում:

Երկարատև ճանապարհորդությունների ժամանակ ավանակները տանում էին բեռներ: Գտի՛ր երկու ավանակներին:



Հերովդես թագավորը, որի իշխանության տակ էր Բեթլեհեմը, վախենում էր մրցակիցներից: Գտի՛ր նրա երկու հետախույզներին:

Հրեա մարտիկներն ազատության համար ցանկանում էին ժողովրդին ազատել հռոմեացիներից:

Գտի՛ր գլխի վրա սափոր տանող երկու կանանց:

Գտի՛ր ծառային,
որը մսուրի մեջ
չոր խոտ է լցնում:

Սամարացի մարդիկ
անցանկալի էին
հուդայական
քաղաքներում:
Գտի՛ր ռաբբիին,
որը դուրս է անում
սամարացուն:

Մի կնոջից
գողացել են փողերը:
Դու կգտնե՞ս գողին:

Քանի՞ աղավնի
ես դու տեսնում:

Հռոմեացիներին օգնող
մարդկանց չէին սիրում:
Գտի՛ր տեղացի
հարկահավաքին,
որը մարդահամար է
անցկացնում կայսեր
համար:

Նորածիններին
բարուրում էին,
որպեսզի երեխաները
չմրսեին:
Գտի՛ր մորն ու
նորածնին:

Հայրենիք այցելող
մարդիկ հաճախ կանգ
էին առնում
ազգականների տանը:
Գտի՛ր միմյանց
ողջունող երկու
ազգականներին:

Օտարերկրացիները
հազվադեպ էին
հայտնվում Բեթլեհեմում:
Գտի՛ր աֆրիկացի
հյուրին:

Հռոմեացի
զինվորները
հետևում էին
բնակչության
մարդահամարին:
Գտի՛ր 5 զինվորներին:

Գտի՛ր հովվին,
որը փորձում է
բռնել ոչխարին:

Գտի՛ր սանդալ
կրծող այծին:

Խորեն Տեր-Հարությանի

Խորե՛ն, դու շատ «խորեն» ես մոտենում քո գործին... *Երվանդ Քոչար*

Երևանի Օղակաձև այգում (Ս. Գրիգոր Լուսավորչի Մայր եկեղեցու հարևանությամբ) տեղադրված հետաքրքիր արձանը կոչվում է «Վերածնված Հայաստան»: Հեղինակը միգուցե շատերիդ համար անհայտ, սակայն աշխարհին հայտնի հայազգի քանդակագործ Խորեն Տեր-Հարությանն է:

Խորեն Տեր-Հարությանը ծնվել է 1909 թ. մարտի 2-ին, Արևմտյան Հայաստանի Խարբերդի գավառի Աշոտավան /Աշվան/ գյուղում: Սակայն Հայոց Մեծ Եղեռնի տարիներին ընտանիքի ողջ մնացած անդամների հետ գաղթել է Արևմտյան Հայաստանից:

1921 թ. Խորենը ընտանիքի հետ տեղափոխվում է ԱՄՆ: Հաստատվում է Մասաչուսեթս նահանգի Վուսթեր քաղաքում: 13-ամյա տղան դպրոց է հաճախում, նաև աշխատանքի է անցնում նախ՝ որպես կոշիկ մաքրող, այնուհետև՝ փողոցում լրագիր վաճառող: Ու մի օր նկատում է այդ փողոցում գտնվող նկարչի խանութը: Արագ մտերմանալով նկարչի հետ՝ պատանի Խորենը սկսում է ընդօրինակել նրան ու կարճ ժամանակում իր վարպետությամբ և աշխատասիրությամբ զարմացնում վարպետին: Ամեն ինչ որոշված էր. Խորենը պիտի նկարիչ դառնար, հետագայում՝ հրապուրվեր քանդակով:

Նրա ստեղծագործական ուղին սկզբնավորվում և ձևավորվում է արտասահմանում, մասնավորապես՝ Լատինական Ամերիկայի Ջամայկա կղզում, որտեղ ստեղծում է հարուստ գունապնակով գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքներ, ինչպես նաև Ջամայկայի կարծր փայտատեսակներից կերտում բազմաթիվ քանդակներ:

Ու երբ արդեն հայտնի քանդակագործ էր, 1970 թվականին առաջին անգամ այցելում է Հայաստան: Հաջորդ տարի Տեր-Հարությանը Երևանի արվեստասեր հանրությանը ներկայանում է Նկարչի տանը բացված անհատական ցուցահանդեսով:

1983 թվականին արվեստագետն իր միջոցներով ԱՄՆ-ից Հայաստան է տեղափոխում և հայրենիքին նվիրում շուրջ 250 քանդակ:

Խորեն Տեր-Հարությանն իր աշխատանքները շատ քիչ է նվիրել կամ վաճառել. նրա նպատակը դրանք հավաքելն էր ու Հայաստան բերելը: Նա միշտ ասում էր. «Ես չեմ մասնակցել այս երկրի կառուցմանը, միշտ պարտքի զգացողություն եմ ունեցել իմ հայրենիքի հանդեպ»: Երջանկությունից շողում էր, երբ հայրենիքում բացվեց իր աշխատանքների մշտական ցուցադրությունը:
Քանդակագործի ստեղծագործության առանցքային թեմաներն էին՝ ընտանիքը, մայրությունը, եղեռնը, պատերազմը: «Ամբողջ կյանքիս ընթացքում ինձ հուզել է եղեռնը, և թեև մի քանի անգամ անդրադարձել եմ այդ թեմային, դա ինձ չի բավարարել. ցանկացել եմ մի արժանի հուշարձան կանգնեցնել»,- ասել է քանդակագործը:

Արվեստագետը մասնակցել է համաշխարհային շատ ցուցահանդեսների թե՛ ԱՄՆ-ում, թե՛ Եվրոպայում՝ ցուցադրվելով հայտնի արվեստագետների՝ Պաբլո Պիկասոյի, Ժակ Լիպշիցի և այլոց հետ:

Նրա մասին հայ քանդակագործության տիտաններից մեկը՝ Երվանդ Քոչարը, ասել է. «Սիրելի՛ Խորեն, դու իրոք շատ «խորեն» ես մոտենում քո գործին, արվեստի շնչով իմաստավորում ես ձևը: Հայ արձանագործության պատմության մեջ, սկզբից մինչև մեր օրերը, ես առաջին անգամ եմ տեսնում մի արձանագործի, որ իր հայությունն առնչում է համաշխարհային արձանագործության հետ: Շնորհակալություն, սիրելի՛ Խորեն: Դու հայ ես, լավ, ազնիվ հայ, քո սիրտն օտար ափերում տրոփում է հայավարի: Խորե՛ն, դու բուն իմաստով արձանագործ ես, իսկական հայ արձանագործ»:

Իր ողջ կյանքում Խորենը հիշում է հոր խրատը. «Այս կյանքում հարատևելու համար անհրաժեշտ է ուժգին հավատ ունենալ Աստծո նկատմամբ, խնամքով փայփայել համբերելու առաքինությունը և ամեն ինչին դիմանալու վճռականություն ցուցաբերել»:

Խորեն Տեր-Հարությանը վախճանվել է 1991 թվականին Նյու Յորքում, դժբախտ պատահարի՝ ավտովթարի հետևանքով:

ԹՎԵՐԸ՝ ԲԼՈՒԹՅԱՆ ՄԵՋ

10 ԹՎԻ ՄԱՍԻՆ

- Օմարները՝ փշոտ խեցգետինները, 10 ոտք ունեն:
- Կարիճն ունի 10 աչք: Երկուսը մեծ են, մյուսները՝ մանր:
- Կույր օձն ապրում է ավազի մեջ և ընդամենը 10 րոպե կիզիչ արևի տակ մնալով՝ սատկում է:
- Ջրի տակ լողացող փոկի սրտի աշխատանքը դանդաղում է 10 անգամ, որպեսզի թթվածնի պաշարը ճիշտ օգտագործվի:
- Պատկերացնո՞ւմ ես՝ աշխարհում գոյություն ունեն թռչող ձկներ: Նրանք և՛ լողում են ջրում, և՛ թռչելով անցնում 10 մետր հեռավորություն:

3 ԹՎԻ ՄԱՍԻՆ

- Ճապոնական ծովային սարդ-խեցգետինն աշխարհի ամենախոշոր խեցգետինն է: Նրա ոտքերի բացվածքը հասնում է մինչև 3 մետրի:
- Ութոտնուկն ունի 3 սիրտ:
- Ոզնու փշերի երկարությունը միջինում 3 սմ է:
- Կկվի ձուն կշռում է 3 գրամ:
- Աշխարհի ամենախոշոր արջերից մեկը կոդիակ կոչվող արջն է: Նա ապրում է Ալյասկայում ու կանգնած դիրքում ունի 3 մետր հասակ: Պատկերացնո՞ւմ ես՝ ավելի բարձր, քան ձեր տան առաստաղն է:
- Աֆրիկյան ջայլամն ունի 3 մետր հասակ:
- Կապույտ կետի լեզուն 3 տոննա է կշռում. համարյա ամենագնացի քաշին է:

2 ԹՎԻ ՄԱՍԻՆ

- Նորածին ընձուղտն ունի մինչև 2 մ հասակ:
- Լուսնի վրա վայրէջք կատարած առաջին տիեզերագնացները տիեզերանավից դուրս 2 ժամ են անցկացրել:
- Մարս մոլորակն ունի 2 արբանյակ:
- Երկնագույն կետը կարող է ուտել օրական մինչև 2 տոննա կեր:
- Լեմուրն ունի 2 լեզու:Հիմնական լեզվի տակ գտնվում է «ստորին լեզուն»,որով մաքրում է ստորին ծնոտի ատամները:
- Կենգուրուները ծնվում են շատ փոքր՝ ընդամենը 2 սմ: Բայց շարունակում են մեծանալ ողջ կյանքի ընթացքում:
- Թքող կոբրաները թույնը կարող են թքել 2 մ հեռու:

ԲԱՑԱՀԱՅՏԵՆՔ ՄԻԱՍԻՆ

ՄԱՐԴՆ ՈՒՆԻ 1 ՍԻՐՏ, ԻՍԿ ՈՒԹՈՏՆՈՒԿԸ՝ 2-ՈՎ ԱՎԵԼԻ: ՔԱՆԻ՞ ՍԻՐՏ ՈՒՆԻ ՈՒԹՈՏՆՈՒԿԸ:

_____

ՍՊԻՏԱԿ ՌՆԳԵՂՋՅՈՒՐՆ ՈՒՆԻ 2 ԵՂՋՅՈՒՐ, ԻՍԿ ՀՆԴԿԱԿԱՆ ՌՆԳԵՂՋՅՈՒՐԸ՝ 1 ԵՂՋՅՈՒՐ ՊԱԿԱՍ: ՔԱՆԻ՞ ԵՂՋՅՈՒՐ ՈՒՆԻ ՀՆԴԿԱԿԱՆ ՌՆԳԵՂՋՅՈՒՐԸ:

_____

ԽԵՑԳԵՏԻՆՆ ՈՒՆԻ 10 ՈՏՔ, ԻՍԿ ՍԱՐԴԸ՝ 2-ՈՎ ՊԱԿԱՍ: ՔԱՆԻ՞ ՈՏՔ ՈՒՆԻ ՍԱՐԴԸ:

_____

ԲԻՑՈՆԸ 1 ԿՄ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՈՏ Է ԱՌՆՈՒՄ, ԻՍԿ ՓԻՂԸ՝ 4 ԿՄ ԱՎԵԼԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ: ՓԻՂԸ ՔԱՆԻ՞ ԿՄ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ Է ՑԱՌՈՒՄ ԹԱՐՄ ԽՈՏԻ ՀՈՏԸ:

_____

ԽԱՏՈՒՏԻԿԻ ԾԱՂԻԿՆԵՐԸ ՓԱԿԱՎՈՒՄ ԵՆ ՑԵՐԵԿՎԱ Ժ 2-ԻՆ, ԻՍԿ ԶՐԱԵՈՒԵԱՆԻ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ՝ 5 Ժ ՈՒԵ: ԺԱՄԸ ՔԱՆԻՍԻ՞Ն ԵՆ ՓԱԿԱՎՈՒՄ ԶՐԱԵՈՒԵԱՆԻ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ:

_____

ԻՍԿ ՔՈ ԿԱՐԾԻՔՈՎ ՄԱՐԴՆ ԻՆՉՈ՞Ի 2 ԱՅՔ, 2 ԱԿԱՆՋ ԵՒ ՄԵԿ ԲԵՐԱՆ ՈՒՆԻ:

_____

_____

ԱՍԵՑԱԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԱՍՏՂԸ

Կա՞ մեկը, ով ամանորյա եղևնին առանց շողարձակող աստղի է պատկերացնում: Բացի գեղեցիկ լինելուց՝ այն իր մեջ հատուկ խորհուրդ է պարունակում: Իրականում դա Քրիստոսի Ծննդյան վայրը լուսավորող աստղն է, որով առաջնորդվում են արևելքից եկող մոգերը. այն անվանում են նաև բեթլեհեմյան աստղ:

Այս աստղի մասին եկեղեցու հայրերը բազմաթիվ մեկնություններ են տվել:

Սուրբ Հակոբ Մծբինի Հայրապետ (4-րդ դար, Միջագետք, Մծբին)
«Այն պահին, երբ ծնվեց Հիսուսը, բոլոր մոգերն իմացան, թե ինչպես գնան նոր ծնված թագավորի մոտ: Այս աստղի մեջ մոգերը տեսան Սբ Կույսին՝ շատ զարմանալի կերպարանքով, որ բազմել էր և իր գրկին ուներ մանուկ Հիսուսին... եվ բոցավառ թագ կար Նրա գլխին»:

Հովհան Ոսկեբերան (4-րդ դար, Անտիոք)
«Դա բազմաթիվ աստղերից մեկը չէր, դրա տեսքով աներևույթ զորություն էր հանդես գալիս: Սուրբ Ծննդյան աստղն իր կերպարանքով (արտաքին տեսքով) առավել էր արեգակից»:

Ներսես Շնորհալի (12-րդ դար, Ծոփքի Նահանգ)
«Աստղի հայտնվելու պատճառը հայտնի է: Բայց այն բնական աստղերից չէր, այլ նոր ու զարմանալի, քանի որ օրենքով չէր այդպիսի ընթացքը»:

Տաթևացի (14-րդ դար, Մեծ հայք, Սյունիք)
«Լուսավոր աստղը, մոգերին առաջնորդելով, եկավ ու մտավ մսուրի մեջ, ուր մանուկն էր, և կանգնեց նրա գլխավերևում, ու հովիվները երկրպագեցին Նրան: Այս խորհրդի պատճառով է, որ լույսով ենք մտնում եկեղեցի ու տոնը կատարում» (Տաթևացի):

ՄԻՍՍԻՆ ՊԱՏՐԱՍՏԵՆՔ
ԲԵԹԼԵՀԵՄՅԱՆ ԱՍՏՂԸ ԵՒ ԴՐԱՆՈՎ
ՁԱՐԴԱՐԵՆՔ ՏՈՆԱԾԱՌԸ։

Ի՞նչ է Սուրբ Ծնունդը

Սուրբ Ծնունդը քրիստոնեական ամենանշանակալի և հուզիչ տոներից է, որն աշխարհին բերում է ուրախություն, սեր և հույս: Սուրբծննդյան իրական խորհուրդը ձյան անտեսանելի շերտի պես թափվում է աշխարհի վրա՝ տալով ամեն ինչին յուրահատուկ երանգ. Հիսուսն աշխարհ եկավ՝ աշխարհին փրկություն և օրհնություն բերելու համար:

Աստված ուղարկեց իր Որդուն՝ որպես կենդանի նվեր մարդկությանը՝ ցույց տալով սիրո և կարեկցանքի գերագույն դրսևորումը:

Սուրբ Ծնունդը մարդկանց միավորում է ջերմության և սիրո շրջանակում. այն ուրախության, բարության և օրհնության ժամանակաշրջան է: Սա այն պահն է, երբ մարդիկ ձգտում են ավելի լավը լինել, մտահոգություն ցուցաբերել ուրիշների նկատմամբ և ձգտում են խաղաղության՝ իրենց սրտերում և ամբողջ աշխարհում:

Սա այն պահն է, երբ նույնիսկ ամենազբաղված սրտերը բուխարու մոտ ժամանակ են գտնում փոխադարձ ժպիտների, գրկախառնությունների և հետաքրքիր պատմություններ պատմելու և լսելու համար: Մոմերի լույսի տակ զրույցները դառնում են կախարդական կամուրջներ սերունդների միջև և փոխըմբռնման ջերմությամբ են լցնում երեկոյան լռությունը:

Սուրբ Ծնունդը նաև նվերներ տալու և ստանալու տոն է, բայց նվերների ինչպիսին լինելը բոլորովին էական չէ, կարևորը դրանք ի սրտե լինեն:

Սուրբ Ծնունդին ամբողջ աշխարհը կարծես կանգ է առնում հրաշքի ակնկալիքով: Սուրբ Ծնունդը մեր տներ է բերում այն համոզմունքը, որ մարդկանց սրտերում միշտ տեղ կա բարության և հրաշքների համար:

Սուրբ Ծնունդը պարունակում է խորը հոգևոր և մարդկային արժեքներ՝ ուրախություն և իմաստ հաղորդելով մարդկանց կյանքին:

Շնորհավո՛ր Սուրբ Ծնունդ:

Թող ձեր օրերը լցվեն օրհնություններով և թող յուրաքանչյուր պահ լինի Սուրբ Ծննդյան հրաշքի հիշեցում: Թող այս լուսավոր պահի ուրախությունն ուղեկցի ձեզ ամբողջ տարի:

Ֆլորա Սուքոյան

Շնորհավորում են «Շողիկի» ընթերցողները

«Շողիկ» ամսագրի բոլոր ընթերցողներին շնորհավորում եմ Սուրբծննդյան այս հրաշք տոնի կապակցությամբ: Սուրբ Ծնունդը լոկ ուրախ և գեղեցիկ տոն չէ, այլև հոգևոր վերածննդի տոն է, օր, երբ Հիսուսը ծնվում է մեր յուրաքանչյուրի սրտում՝ մաքրագործելով մեր հոգիները:

Թող որ Հիսուսի սերը, զորությունը և խաղաղությունը լինի մեր սրտերում և ընտանիքներում:
Շնորհավո՛ր Սուրբ Ծնունդ

Սյուզաննա Ալեքսանյան (ք. Երևան, ՀԱԹ)

Որովհետև մեզ մի մանուկ ծնվեց, մեզ մի որդի տրվեց, և իշխանությունն իր ուսերի վրա կլինի, և կկոչվի Ահմանչելի խորհրդական, Հզոր Աստված, Հավիտենականության Հայր և Խաղաղության Իշխան:

Եսայի 9:6